կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է բավարարման, իսկ Հայցվորի կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի ենթակա է բռնագանձման 10.030.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

<<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 15.07.2021թ. թիվ ՏԿԵՆ-ՀՄԱՃՁԲ-2021/3Շ կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով կապալառուի կողմից կատարված աշխատանքի վերջնական արդյունքներն ընդունել պարտավորեցնելու և 15.07.2021թ. ՏԿԵՆ-ՀՄԱՃՁԲ-2021/3Շ կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության որոշումը (հայտարարությունը) անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի թիվ ՏԿԵՆ-ՀՄԱՃՁԲ-2021/3Շ ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որումը (հայտարարությունը):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պարտավորեցնել ընդունել թիվ ՏԿԵՆ-ՀՄԱՃՁԲ-2021/3Շ կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրով կապալառուի կողմից կատարված աշխատանքի վերջնական արդյունքները:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանից հօգուտ <<ՈՍՄԱՐ>> ՍՊԸ-ի բռնագանձել 10.030.000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջին համարժեք նախապես վճարված պետական տուրքի գումար:

Դատարանի 25.03.2026թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը, այնուհետև՝ վերացնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEFD-DF71-4BE9-A88E հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am